№ 1448413
20-03-2025
Получить уведомление
По электронной почте

Мэрия Еревана

Заявитель *ՎԻԿՏՈՐ ԾԱՏՐՅԱՆ*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԻՏԻՆԳԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ես, Վիկտոր Ծատրյանը, նախատեսում եմ կազմակերպել հանրային հավաք «Save Trees Yerevan» և «Yerevan for People» նախաձեռնությունների անունից: Հավաքի նպատակն է՝ արտահայտել մեր անհամաձայնությունը «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն ՀՈԱԿ» կազմակերպության և Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող գործողություններին, որոնք վերաբերում են Երևանի փողոցներում առողջ ծառերի հատմանը: Միտինգը կանցկացվի 2025 թվականի մարտի 25-ին, ժամը 16:00-ին Երևանի քաղաքապետարանի շենքի մոտ՝ Արգիշտի փողոց, 1 հասցեում:

Հավաքի մանրամասները:

Տեղը՝ Արգիշտի փողոց, 1
Ֆորմատը՝ Միտինգ
Սկիզբը՝ 25 մարտի 2025 թ., ժամը 16:00
Ավարտը՝ 18:00 նույն օրը
Հավաքի նպատակները:

Հասարակական մտահոգության բարձրաձայնում առողջ ծառերի հատման վերաբերյալ, որը իրականացնում է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն ՀՈԱԿ»
Պահանջել քաղաքապետարանից վերադառնալ 2024 թվականին քաղաքացիական հասարակության հետ ձեռք բերված պայմանավորվածություններին
Դադարեցնել առողջ ծառերի անհարկի էտումը և հատումը
Կազմակերպել ծառերի որակյալ հետազոտություն՝ ներգրավելով «Kanach Yerevan» նախաձեռնության և անկախ մասնագետների տվյալները
Պահանջել Երևանի քաղաքային կանաչապատման նոր կապալառուի ընտրության համար մրցույթի հայտարարում
Պահանջել Երևանի բնապահպանական վերահսկողության ծառայության ստեղծում
Նախաձեռնել դատախազական ստուգում «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն ՀՈԱԿ» գործունեության վերաբերյալ

Մասնակիցների սպասվող քանակը՝ մինչև 100 մարդ։

Հավաքի ընթացքում նախատեսվում է օգտագործել պաստառներ և կարգախոսներ։ Նպատակահարմար լկլինի նաև ձայնային տեխնիկայի՝ բարձրախոսների և միկրոֆոնի օգտագործումը։

Заявитель

ՎԻԿՏՈՐ ԾԱՏՐՅԱՆ